«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ ք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝ easm.himnark@gmail.com

«28» դեկտեմբերի 2023թ.

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Գնորդ) և «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի մայիսի 03-ին կնքված «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/13-1» և 2023թ.-ի հուլիսի 12-ին կնքված «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-1» ծածկագրերով գնման պայմանագրերով (այսուհետ՝ Պայմանագիր), ինչպես նաև «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-1» ծածկագրով գնման պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 համաձայնագի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչ օրս չի մատակարարել «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-1» ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածի 17-րդ, 18-րդ, 24-րդ և 41-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքները և «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/13-1» ծածկագրով պայմանագրի 10-րդ և 24-րդ չափաբաժինով սահմանված ապրանքները:

2023թ.-ի հոկտեմբերի 31-ին Գնորդը գրությամբ դիմել է Վաճառողին, որպեսզի հինգ աշխատանքային օրվա ընթացքում մատակարարվեն թիվ 1 հավելվածով սահմանված չմատակարարված ապրանքները, սակայն Վաճառողից ոչ մի արձագանք չի ստացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը հարկադրված է 2023թ. դեկտեմբերի 12-ից Պայմանագրերը մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 /տաս/ աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝

համապատասխանաբար 2545874 (երկու միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամի և 1697250 (մեկ միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, Հ/Հ 900012000700)

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ ԲԱԳՐԱՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ